





2004



671.2  
—  
17.97

SCOTTISH  
MILITARY

May. 28



241  
4-21

ԳԵՐԵՎԵՆԻ 1404-ԱՀ

Մ

Ա

Ե

Բ

Զ

Ե

4082

Դ ա ր գ Տ ա ն ո ւ թ ի ւ ն .

— 333 • —

Պ հայրապետութե Տ է Յ Ա Վ -  
Ն Ա Շ Ե Ա Խ Կ ա ր բ ե ց ւ ո յ  
ս ր բ ա ղ ն ա ս ո ւ ր բ Կ ա թ ո ւ ղ ե  
կ ո ս ի ա մ ե ն ա յ ն հ ա յ ո ց :

Վ Ե Ր Ո Ւ Յ Ա Վ

Հ ր ա մ ա ն ա ւ Տ ե ա ս ն Բ Ա Գ Տ Վ -  
Մ Ա Բ Ա Յ ի շ խ ա ն ա ղ ն ի ջ ա լ ա -  
լ ե ա ն ս ր բ ա ղ ա ն Ա ր ք ե պ ի ս կ ո -  
պ ո ս ի և մ ե տ ր ա պ ո ւ լ տ ի հ ա յ -  
ո ց հ ա մ ա յ ն Ա լ ո ւ ա ն ի ց :

Պ Ե Ա Բ Ը Ը Ի

Յ ա մ ի Տ ե ա ս ն 1832



10632

# ԺԱՄԱՆԱԿԻ ԱՅՐՁՆ



Մարգարեական բանն մեղ հաւատացնումէ: Յայտ. ժ. 5. 6: թէ մին էնպէսի օր կըդայ, որ հրեշտակն իրան ձեռըն բարձրացնելով դէպի երկինքն երդում կուտէ նորանով որ կենդանի է յաւիտեանս յաւիտենից. թէ էլ աւելի ժամանակ չը էայ: Արքան որ հեռու լինի էս երդումի սարսափելի ժամանակն, բայց հենց էս խօսքս ամէն օր ասվումէ հաղարաւոր մարդկանց, որ մեր մահկանացու եղբարք են. նորանք լսումեն և մեռնումեն:

Մահն ինչպէս հրեշտակի թևերով թըռչումէ տանից տուն և ասումէ ամէն մէկն որ էնտեղ բնակված է. թէ քեզ համար էլ աւելի ժամանակ չը էայ. դու պըծել ես քո վաղելդ և

անց է կացելքեղ համար սահմանված  
ժամանակն. հիմի՛ մտիր յաւիտենա-  
կան աշխարհքն. Քանի որ էս հրա-  
մանս չի տավել մեղ՝ լու կը լինէր,  
եթէ մենք մեզանից կը հարցնէինք. մի  
թէ պատրաստ ենք մենք լսելոց և  
ընդունելոյ էն խօսքը և հրամանըն:

Ժամանակ ի վերջն. մեր  
երկրաւոր շահի և ուրախութ վերջն.  
Հիմի՛կ մարդիքն շատ կերպով հե-  
տևսմեն մարմնոյ ցանկութեանն աշ-  
քերի ցանկութեանն և էս կեանքիս  
ամբարտաւանութեանն, բայց էն ժա-  
մանակն ագահն կը քաշվե կը ջոկվե  
իրան խաղնայիցն. ամբարտաւանն կը-  
խօնարհվե և կը ցածանայ. հարբե-  
ցողն էլ չի ուղիլ հարբեցնօղ խըմե-  
լիքըն և անաւակն էլ չի պարծենալ  
իրան խայտաւակութենովն և պղծաւ-  
թենովն: Ապա պատշաճ է ձեղ ով  
մարդիք, որ անցկացնեք ձեր կեանքըն.  
մեղքերի մէջն որ ձեզ անարգելի  
են անում, և ունայնութեանց մէջն ոք  
մէնակ մին քիչ ժամանակ կարօղ են  
միսիթարել ձեր սրաերըն:

Օգոյշ կացեք իմ բարեկամներս,  
 որ ձեզ սիրտըն չըկալցնեք էս կե-  
 նաց անցաւոր բարեփներիցն և փառ-  
 քիցն. զգոյշ կացեք որ չըմատնըվեք  
 նորանց էնպէս, մինչև կուռք շինել  
 նորանց ձեզ համար. որ չըլինի թէ  
 դուք վերջն առանց օգնութեան և  
 խեղճ՝ մնաք: Խնչու որ՝ նորանք չեն  
 կարօղ ձեզ հետ գալ էն հոգեոր աշ-  
 խարհքն. նորանք էս անցաւոր ժա-  
 մանակիս բաներ են և յաւիտենական  
 աշխարհքումն տեղ չունին: Ամէն  
 բասի վերջն մօտացել է. ուրեմն  
 պարկեցտ և արթուն կացեք: (ա. Պէտ.  
 Շ. 7:) Պարկեցտ և արթուն կացեք  
 ամէն երկրաւոր ուրախութեց մէջն  
 և պատրածու կացեք նորանցից ջոկ-  
 վիլ, երբ որ հրեշտակն կասէ: Թէ  
 էլ աւելի ժամանակ չըկայ: Խա խօսքս  
 ամէն երկրաւոր ուրախութիւնըն կը-  
 վերջացնէ և ամէն անցաւոր բաների  
 վերայ դրած յոյսըն՝ իսպառ կըկտրե:

Խա մանակի վերջն. Ապա  
 զղջանալոյ և փրկելոյ հմբ սահման-  
 ված ժամանակն ունի իրան վերջըն:

ԱԵՆՔ մտնումենք էս աշխարհքիս  
մէջ տգիտութենով խաւարոված, և  
հենց մեր բնութենովն յօժար ենք  
դեպի մեղք գործելն։ Ա, Յ պատկերն  
մեր մէջն կորած է, և մեր կեանքն է  
միայն էն ժամանակն, որ տըվված է  
մեղ էն կորած պատկերըն մին էլ նոր  
գտնելոյ ստանալոյ համար։

Եթէ մենք կըմեռնենք անդեղջ, և  
առանց նորեդվելոյ հաւատքով. ապա  
պէտք է որ յաւիտեան մնանք անդեղջ  
մեղքով պղծված և անսուրբ։ Ա, Խ.  
ինչքան պէտք է որ էս մտածմունքս  
զարթնացնէ և յորդորէ ամեն մար-  
դոյն որ ինքն իրան սիրտըն փորձէ և  
քննէ. մի թէ նոր ծնված եմ ես ոք  
հոգովն։ Ա, Ի՞նչպէս են իմ ուրախու-  
թիւններն և ցանկութիւններն։ Ա, Ե-  
թէ իմ սիրտս Ա, ստուծոյ տաճար է,  
կամ մեղաց բուն։ Ա, Խ քանի կարճ  
է ժամանակն որ նորանում պէտք է  
էս քննութիւնըս պղծնել։

Ժամանակի վերջն. Եթէ  
ժամանակի վերջն հասնի մեղ, դեռ որ  
մեղաց մէջն ենք վարվում՝ ապա ան-

կարելի կը լինի որ Աստուծով վայե-  
լինք և միմիթարվինք:

Աեւք կենումենք էստեղ Ա. Ճանից  
հեռու քցված մեղքի պատճառովն և  
չենք կարօղ նորան տեսնել էնպէս,  
ինչպէս որ նա է. բայց նա էլ իսպառ  
չի թուլել մեզ: «Եա իրան յայտնել է  
ողորմած և պատրաստ թողուն տալոյ  
համար: «Եա ասաց: Ահա հիմիկ է  
ընդունելի ժամանակն, հիմիկ է փըր-  
կութեան օրն: (Բ. Կոբ. Պ. 2:) Աար-  
գարեքն և առաքեալքն, թէպէտ էս  
աշխարհքիցս գնացել են, բայց դեռ  
հիմիկ մեզ հետ խօսումեն և ցոյց են  
տալիս մեզ էն միջնորդին, որ մեր  
փըկութեան համար իրան անձըն պա-  
տարադ արաւ. որ հաւատալով նորա-  
անունովն կեանք ունենանք: (Յօհ. Է.  
31:) «Եորա պաշտօնեանելն որ նորա-  
նից ուղարկվումեն մինչեւ էս օր էք  
աղաջումեն մեզ հաշտվիլ Ա. ստուծոյ  
հետ և հաւատացնումեն մեզ, թէ նա  
միշտ պատրաստ է ընդունել մեզ ի-  
րան գիրին: Ապա արժան է, որ նո-  
րանց աղաղակելըն և կանչելըն փուչ

տեղն համարինք և երկնքի Տէրի խօս-  
 քերըն անարգենք: Այնք շուտով կը-  
 տեսնենք, թէ ինչքան մեծ է մեր կո-  
 րուսան՝ որ էլ բժշկութեանք գտնիլ  
 ինչու որ՝ երբ որ մարդն էս աշ-  
 խարհքից դուրս կըգնայ, էլ նորա-  
 աչքն թողութիւն չի տեսնիր: Այս  
 որ ողորմած տէրն գալիս է մեր սրաի  
 դուռն և խնդրումէ որ իրան ընդու-  
 նենք: Կա յորդորումէ և կանչումէ  
 մեզ, որ յետ դառնանք և զղջանանք,  
 որ նա էլ կարօղանայ մեր մեղքըն  
 մեզ բաշխել: Կապա դուք մի պըն-  
 տացնեք ձեր սիրտըն, որ ըըլինի  
 թէ էն ժամանակն որ հրեշտակն ա-  
 ղաղակէ, թէ ժամանակի վերջն հա-  
 սել է՝ ինքն Տէրն իրան ձեռըն բարձ-  
 րացնելով վրէժինդրութիւն անէ և  
 երդում ուտելով ասէ ձեզ՝ թէ հե-  
 ռացէք ինձանից, դուք որ անարգե-  
 ցիք իմ խոստացած բարիքներըն:

Համանակի վերջն Այս ժա-  
 մանակ որ էս վերջն կըգայ, մեղաւոր  
 մարդոյ սրտի մէջն կըկորչի վերջն  
 յայսն: Այս ով մահիցն առաջ իսպառ

ողորմելի չի լինում. բայց Ճշմարիտ  
 է, որ շատ անգամ անօրէն մարդիքն  
 ամենից աւելի են ուրախանում, բայց  
 շատ ժամանակ չի մնալ էսպէս. ին-  
 չու որ՝ նորանց ուրախութիւնն շու-  
 առվ տրտմութիւն կըդառնայ: Մ'իտք  
 բերէ քդուք էն դատաւորին, որ իրան  
 աթուի վերայ նստած կանչումէ ձեզ  
 իրան դատաստանի առաջն որ նորան  
 պատասխան տաք. թէ ի՞նչպէս էք  
 անցկացրել դուք ձեր կենաց ամեն  
 ժամանակըն էն առաջվան աշխարհ-  
 քումն: Դուք էնտեղ անցկացրեք քը-  
 սան, քաւասուն կմեթանասուն տա-  
 րի: Եւ ես, կասէ նա՝ տուի ձեզ էն  
 ժամանակըն հաղարաւոր օգտակար  
 հնարներին հետ, որ դուք համնեք  
 շնորհաց և փրկուեն: Ի՞նչպէս դուք  
 էս ամենըն գործ ածեցիք: Քանի՛  
 կերակի օրեր տուի ձեզ քանի՛ քա-  
 րոզներ էք լսել: Աթափ յաջողակ  
 ժամանակ տուի ձեզ որ աղօթքին  
 պարապվիք և ձեր հոգւոյ փրկութե-  
 համար միտք անեք, և ել ձեր հոգոյ  
 մէջ ձեր Ա՛ և փրկեք Քըրիստոսի

Հետ խօսիք, և նորանից շնորհք առ-  
նէք։ Ապա էս յաջողակ ժամանակիցն  
դուք մին բան շահվել էք, թէ չէ.  
աղօթք արելէք, թէ չէ. ձեր հոգոյ  
հետ և ձեր ստեղծողի և փրկչի հետ  
մտածութիւն արելէք, թէ չէ։ Ամ  
թէ ձեզ տըվված ժամանակըն փուչ  
տեղն կորցրել էք հաղար յիմարուն-  
ների մէջն, և անարգել էք էն մին  
բանըն որ միայն և ամենիցն առաջ  
ձեզ համար հարկաւոր է։ Ապա ի՞նչ՝  
եթէ էն ժամանակն ձեր խղճմտանքն  
ձեզ կըմեղադրէ. ով կարօղ է իմա-  
նալ էն ահաւոր և սարսափելի տըտ-  
մութիւնըն որ ձեր սիրուն կըծակէ  
որ ել կաղաղակէք. վայ ինձ խեղ-  
ճալի մարդ եմ։ (Համ. Է. 24: )  
Աստուած խօսեց ինձ հետ իմ ծընօ-  
ղաց խրատովն և իրան պաշտօնեանե-  
րի և քարոզիչների յորդորմունքովն և  
էլ իրան սուրբ աւետարանի խօսքովն.  
բայց ես էս ամէնըն անարգեցի և իմ  
հոգիս կորցրի. Ով որքան սարսափե-  
լի է էս բանա։ Արի միտք անենք  
նորա համար, դեռ քանի որ յօյս ու-

Նի՞ք ողորմութիւն գտնելոյ համար,

Ժամանակն կը վերջանայ:  
 Ապա որչափ թանգ և պատուական  
 է, քանի որ դեռ չի վերջացել, մա-  
 նաւանդ նորանց համար, որ դեռ հե-  
 միկ իրանց մեղքերիցն յետ չեն դար-  
 ձել: Ամէն սահած որ տըվվումէ  
 ձեր կենաց համար, Աստուծոյ ողոր-  
 մութիւն է, որ ձեզ ժամանակ է տա-  
 լիս ձեր մեղքերիցն զղջանալոյ հա-  
 մար: Ապա դուրս եկեց էն Տէրե  
 առաջն, որ դուք բարկացրել եք.  
 ման եկեք էն Տէրեն՝ դեռ քանի որ  
 կարելի է գտնել նորան, կանչեցէք  
 նորան՝ դեռ որ նա մօտիկ է, գնա-  
 ցէք նորա մօտ Յիսուսի անունովն և  
 առաջ բերեք նորա արդարութիւնըն  
 նորա մահըն և նորա միջնորդութիւ-  
 նըն. աղաղակեցէք և ասացէք. Ա. Ճ  
 քաւիր մեզ մեղաւորներիս:

Ժամանակն կը վերջանայ:  
 Ա. Ենչքան մեծ է էն մարդկանց  
 յիմարութիւնն և անմտութիւնն, որ  
 միշտ վախումեն և ահով բռնըվումեն,  
 ամէն ժամանակ որ միտք են անում;

թէ ժամանակի վերջն կըգոյ, բայց  
 չեն իմանում, թէ ինչպէս պիտի գոր-  
 ծածեն էն իրանց արվված ժմնակըն,  
 որ ամէն օրեւ ամէն սահաթ անցե կե-  
 նում, Կորանք էնպէս են իմանում, թէ  
 իրանց հոգին խսկի չի պատրաստված  
 մահուան համար, բայց էնպէս էլ ի-  
 րանց կեանքըն քաշումեն մին տարուցն  
 մէկել տարվան մէջ, և ոչինչ հոգս  
 չեն անում որ իրանց անձըն պատ-  
 րաստեն մեռնելոյ համար, Կորանց ա-  
 զատ սահաթներըն կորցնումեն միայն  
 ունայն փուչ լքաներին հետեւլով. և  
 անհոգութենով և անամօթութենով  
 փուչ տեղն անց են կացնում իրանց  
 պատուական ժամանակըն, որ արվվաւ  
 նորանց շնորհք և հոգոյ փրկութիւն  
 գտնելոյ համար, և կարծումեն էն-  
 պէս, իբր թէ անկարելի լիներ ի-  
 րանց կեանքի ժամանակըն ուրիշ կեր-  
 պով անցկացնել, բայց մի պյն միշտ  
 խմելով, և ուտելով և ուրախութիւն  
 անելով Առաւոտիցն մինչեւ իրիկունն

միշտ կըտեսնէք նորանց, որ ունայն  
փուչ բաներին են հետեւում. կորցնու-  
մեն են ժամանակըն, որ պետք էք  
Այս ընծայելը և են ել որ պետք էք  
իրանց գործքերին համար գործա-  
ծել. կորցնումեն են, ես ասումեմ, կմ  
ծուլութենով և անհոգութենով, կամ  
մեղաց և յիմարուն մէջ ման գալով.  
դեռ քանի որ ժամանակի վերջն օրե-  
ցօր վւազումի հասնել նորանց վրա

**Հ**ատ մարդիկ անդադար գանգատ  
են անում, թէ իրանց պարապ ժա-  
մանակն քիչ է. բայց երբ որ նորանց  
մին ենպէսի օր է պատահում, որ բան  
չունին գործելոյ հորանում, խմանում  
չեն, թէ էս պարապ օրիս հետ ինչ  
անեն, կմ ինչպէս էս օրիս մին սա-  
հաթըն գործ ածեն մին լաւ և օգ-  
տակար բանի համար:

**Հ**արուստ և մեծամեծ մարդիքն  
լաւ կարօղ են իրանց ժամանակըն են-  
պէս անցկացնել ինչպէս որ իրանց  
կամքն է ուղում, բայց եթէ մտիկ  
տաս թէ նորանք օրեցօր ինչպէս են  
գործ ածում են իրանց ժամանակըն.

յայտնի կըտեսնես, թէ նորանք չեն  
գիտում թէ ինչ անեն նորա հետ.  
թէ ինչպես գործ ածեն նորան և  
թէ ինչպես աղատվին էն ծանը բեռ-  
նիցն, որ ժամանակ է ասվում և որ  
ամէն օր իրան ծանրութենովն նե-  
ղացնումէ նորանց հոգին:

Բայց ինչ ժամանակ որ նորանց  
գլուխն ցաւումէ և երեսի ուաճգն  
փոխվումէ և երբ որ բժիշկն նորանց  
վաղմէն տեմնումէ և անհանգիստու-  
թենով նորանց աջքին մտիկ է անում՝  
մանաւանդ եթէ գլուխըն շարժումէ  
կմ ասում, թէ տարակուսանք ունի  
նորանց կեանքին համար, ապա ինչպես  
տրտմութիւն և ահուվախ բունումէ  
նորանց հոգին. որ վախումեն թէ ժա-  
մանակի վերջն մօտիկ է և շուտով  
կըհամեռ հորանց վերայ. ինչու որ՝  
յայտնի խմանումեն որ իսկի պատ-  
րաստ չեն արքայութիւնն մտնելոյ  
համար: Բայց երբոր հորանց հիւան-  
դութիւնն անց է կենում և նորանք  
տեանումեն որ առողջ են, ապա մին  
էլ չեն խմանում, թէ ինչպես պիտի

վարովին իրան մնացած կեանքի հետ  
 Ավանի խղճալի է մարդկանց  
 որդոց յիմարութիւնն, որ նորանք ու  
 զարկված են էստեղ, որ պատրաստ  
 էին յաւիտեհական կեանքի համար  
 և չեն գիտում, թէ ինչպէս անցկա-  
 յնեն իրանց ժամանակըն: «Եորանք  
 չեն գիտում, թէ ինչպէս մաշեն ի  
 րանց կեանքըն և ինչպէս շուտով  
 համեն էն օրի վերջին, որ անց է  
 կենում: Ժամանակըն անց են կա-  
 յնում քընի մէջ և կամ պարապ ման-  
 գալով մին տեղիցն մէկել տեղն ա-  
 ռանց մին բան մտածելոյ: Դարյնու-  
 մեն ամէն մէկից, ով որ նորանց պա-  
 տահումէ թէ ինչպէս իրանց ժամա-  
 նակըն պիտի կորցնեն. ինչու որ՝ չեն  
 կարօղ էն ժամանակըն անցկացնել  
 էնքան շուտով ինչպէս որ կամենու-  
 մեն: Արա համար իրանց բարեկամ-  
 ներին օգնութիւն են կանչում, որ  
 նորամոց հետ ժամանակըն կը կարձա-  
 ցնեն ծիծաղ խաղ և ուրախութիւն  
 անելով. որ լինի թէ սրանով ազատ-  
 վին ժամանակի մահաբեր ծանրու-

թենիցն։ Բայց Եթէ հեց էս ժամանակումն՝ որ նորանց համար էնքան ծանը է երեսում, նորանց միտքն կը բերեն, թէ նորա վերջն հասել է, ապա էս վերջի մօտենալուցն անսասելի վախով դողումեն։ Ո՞վ քահի մեծ է անմտութիւնն և յուսահատութիւնն, և քանի մեծ է էն հակառակութիւնն՝ որ մեղաւոր մարդկանց սրտումն գտնվումէ և նորանց գործքերիցն երեսում։ Դարաւի մարդկանց որդոց սիրտն լիքն երաւ չարութենավ. յիմար զբաղմունքներ կան նորանց սրտումն որքան ժամանակ որ կենդանի են. և յետոյ մեռելների մօտն են գնում։ Ժաղով թ. 3։

Այս երանի թէ էս ծոյլ մարդեքս՝ որ էդպէս իրանց պատրաստվիլ ըն էն կեանքի համար օրեցօր յետ են քըցում, միտք բերէին, թէ ժամանակն յետ չի ընկնում. բայց թէ սահաթներն, օրերն, ամիսներն և տարիներն շատ շուտով իբր թերով թուջումեն և տանումեն նորանց

Դեպի յաւիտենական աշխարհքն:

Եորանք խաղերի և ուրախութեաների մէջն յետ են ընկում, բայց ժամանակն իսկի յետ չի ընկնում: Այս էնպիսի օր կըդայ, որ նորանք ալբամնի փորձավ կիմանամ: Թէ որքան մեծ ազնիւ և յաւիտենական բարիքներ են կորցրել: իրանց շնորհաց ժամանակըն փուչ տեղն անցկացնելով: Առըք պետքոս առաքեալն հաւատացնումէ նորանց, թէ թէ են մեղքի մէջ էնքան քնած և թմրած են որ հենց իմանաս թէ քնի ցաւ է ընկել նորանց վերայ, եւ կարելի չէ զարթնացնել նորանց դատաստանն իսկի դատարկ չի կենալ և նորանց կորուստն զուք չի համնիլ: Բ. Պէտ. թ. 3:

Ըստով նորանց վերայ կըհանէ էն սարսափելի սահաթն, որ նորանք ահով կըսովորին իմանալ ժամանակի ճշմարիտ գիւղն և պատուականութիւնը: Ապա էն ժամանակն կըկամենան իրանց ամէն ուրախութիւնըն և ամէն հարատութիւնըն և էս աշ-



36290

խարհքիս ամեն մեծութիւնըն տալ  
որ մէնակ մին օրի կամ մին սահաթի  
ժամանակ ստանան զզ ջանալոյ, դէ-  
պի Աստուած դառնալոյ և յուսոց  
և փրկութեան ճանապարհըն գտնե-  
լոյ համար Իսայց վայ՝ նորանց ժա-  
մանակն, փրկութիւնն և յոյսն իսպառ  
կորել են և խելի յետ չեն դառնալ  
նորանց համար:

Ճամանակն կը վեր ջանայ:  
Ծես որբան առատ աղբիւր է էս  
խօսքս իմաստուն և խելացի մարդոց  
համար որ շատ շատ մտածմունք ա-  
նէ: Խնչ ժամանակ որ մտիկ եմ ա-  
նում ես էն օրին, որ պըճճումէ և  
արեգականն, որ վէր է մտնում խա-  
ւարի մէջ, ապա խղձմտանքն ասումէ  
իմ սրտին. էդպէս էլ կըպըճնեն քո  
կեանքի օրերն քո գործելոյ սահաթ-  
ներն և շնորհք գտնելոյ ժամանակ-  
ներն: Այս երանի թէ ես կըկարե-  
նայի կատարել և Աստուծոյ կամաց  
պէս վերջացնել ինձ նշանակված և  
յանձնված գործըն և պաշտօնըն  
դեռ քանի որ շնորհքի լուսաւոր օրն

ինձ համար անց չի կացել. և երանի  
թէ կը կարենայի ես լաւ գործածել  
ողորմութեան և շնորհաց էս փայ-  
լուն և լուսաւոր սահաթներըն, դեռ  
քանի որ գիշերի խաւալն ինձ չի  
հասել և քանի որ իմ գործելոյ և  
աշխատելոյ ժամանակն անց չի կա-  
ցել:

Ինչ ժամանակ որ ես տեսնումեմ  
լուսինն՝ որ լող է տալիս խաւար  
ամպերի մէջ. միտքս եմ բերում թէ  
նա չափումէ իմ կեանքի ժամանակըն  
և ինձ տըվված օրերի ըոպէներըն  
մօտեցնումէ իրանց վերջին։ Ավե-  
րանի թէ ես պատրաստ լինիմ բա-  
րե մնան ասել արեգական և լունին,  
ես ամէն երեսելի երկնքին և նորա  
ամէն պայծառ փառացն։ Սորանք ա-  
մէնքս չափումէն իմ ժամանակըն և  
օրէցօր մօտեցնումէն ինձ դէպի յա-  
ւիտեհական աշխարհքն։

Ինչ ժամանակ որ ես բաղի մէջ  
ման եմ գալիս և էնտեղ կանգելով  
մտիկ եմ անում թէ ինչպէս կամաց  
կամաց շարժվամէ արեգական սա-

Համեմ շուտքն, տեսնումեմ որ՝ թէ և  
նա էն խաղերի վերայ, որ սահաթը ըն  
ցոյց են տալիս էնպէս է մանդալիս,  
որ համարեալ թէ մարդոյ աչքին իսկի  
չի երեսմ, բայց էնպէս էլնա շուտով  
համսումէ վերջի սահաթին։ Ապա  
հենց էս կերպովս իմ սահաթներն և  
բոպէներն էլ կամաց կամաց անց են  
կենում, բայց ոչ ինչ տարակուտանք  
չըկայ, թէ նորանք կը հասնեն իրանց  
սահաթին և վերջին, թէ և ես իս-  
պառ անհոգ լինիմ նորանց շարժվե-  
լոյն և առաջանալոյ համար, թէ  
ժամանակն անց է կենում և թէ  
հենց հիմիկ քիչ է մնայել, որ պը ըծ-  
նըլ ին

Երբ որ սկսումէ նոր տարին և սո-  
րա առաջին առաջօտն լուսաւորաւմէ  
ինձ վերայ, ապա թող իմանամ և  
միաք առնեմ՝ որ առաջին տարին  
պը ծվառ և անցկացաւ իմ գլխի վերայ՝  
նրա համար, որ նոր տարոյն տեղ  
տոյց։ Աւրեմն ճանապարհն որ էս աշ-  
խարհքումս պիտի գնամ մին տարով  
կարճացաւ, որ սահմանված էր իմ

պարտաւորութիւններըն և գործքերըն էս անցաւոր կեանքի մէջն կատարելոյ համար։ Ով երանի թէ երկու տակ աւելի ջերմեռանդ և ջանք անօղ լիսիմ, որովհետեւ էն տարինների թիւն որ նշանակված էին իմ գործելոյն համար, հիմիկ պակասվեցաւ։

Խաչ ժամանակ որ գտնումմամ իմ օրացոցի մէջն իմ ծննդեան օրըն, որ ես էնտեղ զլելեմ, էն օրըն՝ որ նորանում ես ընկայ Վիահկանացու մարդկանց կարգի մէջ և մտի էս ու նայնութենով տրտմութենով և խեղ ճութենով լցված աշխարհը նբա համար որ էս կեանքիս փորձութիւններովն պատրաստվեմ էն լաւ կեանքին համար՝ ապա ես զարմանումմամ և աղաղակումմամ. ո՛վ ամենակարօղ Վասուած. ո՞րչափ անցկացրի ես էս մահկանացու կեանքըն, ո՞րչափ ժամանակ կորցրի և քանի քիչ պատրաստ եմ էն երանելի կեանքն մտնելոյ համար։ Խակի դեռ պատրաստ չեմ ես պատահիլ մահուան ստհաթին,

թէ և միշտ և անսդադար մօտենումնեմ  
 իմ կեանքի վերջինու Ա՞ր թէ նոր  
 ծնված եմ ես Վատուծոյ սուրբ հո-  
 գովն: Ա՞ր թէ սկսել եմ ես ձշմա-  
 րիտ քրիստոնէի կեանքըն վարել:  
 Պատրամստ եմ ես էն ահաւոր օրին  
 համար, որ իմ տարիքս, թէ որչափ  
 եմ կայել էս աշխարհքումս կըհա-  
 մարվ ին: Կարօղ եմ ես մահի նեղ  
 դունովն գնալ մտնել հոգեւոր աշ-  
 խարհքն: Կորոգված և սրբված եմ  
 ես իմ բոլոր բնութեան և էութեան  
 ամեն մասունքներովն որ կարենամ  
 մտնել էն աներեղիթ աշխարհքի  
 մէջ, որտեղ որ տարիների և օրերի  
 փափախութիւն էլ չի լինի, բայց  
 որ մին յաւիտենական օրն կը լցնէ  
 մեր սիբալն և հոգին և բոլոր էու-  
 թիւնըն աստուածային և փառաւոր  
 ուրախութենով և կամ մին յաւիտե-  
 նական գիշելն կըպատէ և կը լցնէ  
 մեր բոլոր էութիւնըն անվերջ տրտ-  
 մութենով տանջանքով և մութ խա-  
 ւարով:

Խնչ ժամանակ որ ես տեսնումնեմ իմ

մեռած բարեկամին կամ ուրիշ մարդոյն որդեգերեզմանն ենթանում, ես ասումեմ իմ մաքումս. վայ՝ նորանց տարեքն և ըոպեքն անց կացան և նորանց փորձվելոյ ժամանակն վերջացաւ յաւիտեան։ Ես նորանք գնացին իրանց յաւիտենական բնակարանն և նորանց հոգոյ վիճակն հաստատ վըճռած է յաւիտեան։ Ի՞ն հրեշտակն որ երդում կեցաւ, թէ էլ ժամանակ չըկայ, վերջացըուց նորանց ամեն յոյսըն և վախըն և արդար դատաստանի օրէնքին և կանօնին պէս նորանց վճիւն հաստատ սահմանվեցաւ. որ կժտան ջանքով չարչարվին և կամ երանութենով վայելեն։ Օգոյշ կացիմ հոգիա. մտածիր դու եւքո տեղափոխութեան համար։

Ի՞նչ ժամանակ որ մենք գնումենք հանգիստարանն, որ մեր ընկեներըին և բարեկամներին վերջին պարտքըն տանք, որքան շուրջ գերեզմաններ ենք տեսնում մեր չորս կողմով մահի ձեռովն շինված։ Ի՞նչ են էն ամեն տապանագիրքն. հայ յիշատակ են.

որ յայտնումն մեղ էս քաղաքի կամ  
շնի մէջ բնակված մարդկաց մա-  
հըն և նորանց կեանքի ժամանակըն  
և էն ահաւոր օրըն, որ նորանց ամէն  
մէկին ասվեցաւ, թէ քեզ համար էլ  
ժամանակ չըկայ: Այս իմ ահճա և  
հենց հիմիկ սովորիք սրանով, թէ իմ  
ժամանակիս վերջն էլ մօտենումէ:

Մին էնպիափ գերեզմանի թումի  
շուտով ինձ վերայ էլ կը բարձրանայ  
մին անյայտ երկրի մէջ: Կա կը ծած-  
կէ էս իմ մարմինը և ուկարները  
խաւարի մէջ և նորանց արեգական  
լուսիցն և մարդկանց աչքերիցն ծա-  
ծուկ կըպահէ մինչեւ որ երկնքն անց  
կը կենայ և ամէն ժամանակն կը վեր-  
ջանայ:

Կարելի է որ իմ ընկերներիցս  
մինն, որ գեռ կենդանի կը մնայ, կը-  
նշանակէ հասարակ քարի վերայ իմ  
օրերի համարըն, էս աշխարհքեա  
ունայնութիւնըն, էս կեանքիս տկա-  
րութիւնըն և ժամանակի վերջըն յե-  
շելոյ համար: Կարելի է որ մին  
բարեկամ մին քանի ժամանակ կը դայ

որ էս իմ հանգիստ անալոյ տեղը շն տեսնէ. Կարելի է որ իմ մասցած քարեկամներիցն մինն կըդոյ որ իմ գերեզմանի քարին մօտ անձայն կարդալովն իմանայ. թէ ինչ է մարդոյ մահն. և կարելի է որ իրան ընկերին ցոյց տայ իմ մահուան օրըն, և սահաթըն: Ա'կ հանդիսաւոր և ահագին օր, որ կըվերջանայ էն իմ ժամանակն, որ ինձ նշանակված է էս աշխարհքումն, և իմ ամէն գործքերըս և աշխատանքներս: Վ'կ մտածիր իմ անձս, թէ հենց էն ժամանակն, որ իմ քարեկամներս և օտաք մարդեքն կըկանգնին և հեսապ կանեն էն օրի թիւըն որ դու էս աշխարհքեցո դուրս եկիր. քո վիճակն վճռած կը լինի հաստատ և անփոփոխ դատաստանով. որ կամ յաւիտնական երանութիւնըն վայելեաքո ժամանակըն Աստուծոյ կամաց պէս գործ ածելոյ համար. կամ յաւիտնական չաբչարանք և տանջանքքաշես. որովհետեւ քո ժամանակըն փուչ տեղն եւ անցկացքել:

Ժամանակն կը վերջանայ  
 Քանի ծանր մեղադրութիւն է մեղ  
 համար: Առևէ յետ բցեցինք մեր  
 կեանքի Ճշմարիտ պարտաւորութիւն-  
 ներըն և աշխատանքներըն և հա-  
 ւատքի գլխաւոր հարկաւորութիւն-  
 ներըն և կարծելով, թէ սորանց  
 կատարելոյ համար դեռ ժամանակ  
 շատ կայ, մեր կեանքըն կորցրինք  
 անպիտան և փուչ բաներին հետեւ-  
 լով Արքան օգուտ կը լինէր, եթէ  
 մենք ամէն օր ժամանակի վերջին  
 համար մտածելով՝ էնպէս միտք կա-  
 նէինք, թէ հենց հիմիկ հըշտակի  
 ձայնըն լսումենք կամ Յիսուսի Վի-  
 դատաստանի առաջին կանգնած ենք.  
 և ապա սորանով կը կանչէինք և կը-  
 զարթնացնէինք մեր հոգին որ հան-  
 դիսաւոր համար տայ, թէ մենք էստեղ  
 մեր ժամանակըն ինչպէս ենք անց-  
 կացրել: Ծանոթ առէք ինձ որ մին  
 քանի մանր մանր քննութիւն անեմ:  
 պատճառն որ՝ հասարակ վարավուրտ  
 անելն քիչ է մարդոյ խղճմտանքըն  
 հաւանայնում և սիրտըն շարժում:

Ուրեմն մեզ հարցնենք.

Ասող) ՀԵ՞ որ մեր ժամանակի մեծ բաժինըն անց ենք կայրել պարապութեան մէջ նուջելով. և կորցըրել ենք էն՝ առանց մին օգտակար բան մտածելոյ կմ գործելոյ: Վահանի մարդեք կան, որ ինչ ժամանակ որ պարապ սահաթներ ունին առաւօտումն. որ կարօղ էին ջերմեռանդութենով պարապի աղօթքին, անց են կացնում նորանց քնի մէջն և փուչ բաների մէջ առանց ԱՇ: Վահանի կէս օրվան և իրեկվան սահաթներ էլ կան, որ հենց էն կերպով անց են կացնում պարապութե և ծուլսւթեան մէջ, մինչեւ որ մին կէս սահաթ էլ իրանց օգտի համար գործ չածեն, առաւօտիցն մինչեւ իրեկունն: Ապա հիմիկ նորանց ժամանակն անց կայաւ և նորանք չեմացան, թէ ինչ բանի համար գործածեն նորան, եքը որ էն նորանց ձեռքն էր տըլված. և հիմիկ նորանց կենալուց յետոյ չեն իմանում, թէ ինչպէս են գործածել նորան:

Ենչու որ՝ իսկի հորա համար հէսապ  
չեն արել. և հիմիկ իսկի չեն պատ-  
րաստված, նորա համար պատասխան  
տալ. Ի՞սպ ասա. միթէ ամէն մար-  
դոյ մեծ դատաւորն չի՞ պահանջիլ  
էն հէսապըն նորանցից էն վերջին  
և ահաւոր օրումն. միթէ հենց նո-  
րանց բնութիւնըն և ծուլութիւնըն  
կընդունի պատասխանոյ տեղ, որ չը-  
դատապարտէ նորանց. անկարելի է:

(Ենքնու) Զէ՞ որ մենք շատ ա-  
ւելի ժամանակ մաշեցինք քէֆ ա-  
նելով և ուրախուների մէջ, քան  
որ պէտք էր: Ուրախուներն չեն  
արգելված, երբոր նորանք հարկա-  
ւոր են, և հանգստանի են տալիս  
մեր մտացն, որ ծանրացել է գործ-  
քերով և աշխատանքներով. և երբ  
որ զօրացնելով պատրաստումեն մեզ  
նոր պարապութեանց և աշխատա-  
նաց համար: Ի՞սպ ասա. չէ՞ որ մենք  
չափիցն աւելի մատնելենք մեզ նո-  
րանց: Զէ՞ որ մենք նորանց համար  
կորցրել ենք էն ժամանակըն, որ  
տըլված էր մեզ, որ մեր անձները

պատրաստենք մահուան և յաւի-  
տենականաշխարհի համար, և ման  
գանք էն բաներին համար, որ մեզ  
աւելի հարկաւոր էին:

Չէ՞ որ չափիցն դուրս շատ ժա-  
մանակ ենք մաշել ունայն ընկերու-  
թիների մէջ նստելով և փուչ խօ-  
սակցուի անելով. Չէ՞ որ շատ ան-  
գամ բոլոր իրիկունքն կորցրել ենք  
նորանցով՝ թէև խղճանանքն յորդո-  
րումի մեջ՝ թէ պէտք է մեզ աւե-  
տարանի խօսքերըն կարդալ և մտա-  
ծել և դէպի Ա, աղօթք անել:  
Չէ՞ որ զուր տեղն ման ենք եկել  
տանից տուն տեսուի անելոյ համար  
Եւ երբոր իրաք հետ նստելով մեր  
խօսակցուն պլծել էր՝ սուս ենք  
կացել եբբոր մենք և մեր բարե-  
կամնելն չենք իմացել թէ ինչ խօ-  
սենք կամ ժամանակըն ինչ բանով  
անց կացնենք. չէ՞ որ ունայն և ան-  
պիտան զրոյց ենք արել ՚ի հարկէ  
ենքան պէտք էր մեզ ժամանակըն  
կորցնել մինչեւ շատ անգամ ոչ մէ-  
նակ քամին և հաւայի եղանակըն.

բայց է՛լ որ ամենիցն վատ է՛ թէ  
 ուրիշ մարդկանց և թէ մեր ընտա-  
 նեաց անարդանքըն և նախատինքըն  
 առաջ ենք բերել մեր խօսակցութե՛  
 մէջ միայն նրա համար, որ չըձանձ-  
 րանանք և մեր փուչ զբացըն եր-  
 կարայնենք: Ի՞նչոյց իսկի մին խօսք  
 Ա, Ե համար և նորա ողորմութեան  
 համար չեր կարօղ մտնել խառնը-  
 վել մեր խօսակցութե՛ մէջ, որ մեր  
 ձարնձրութե՛ ժամանակըն քաշ ցրա-  
 ցնէ և ուրախացնէ: Ա՞ի թէ էս ա-  
 մէն սահաթեներիս համար հէսապ  
 չե՞ն պահանջիլ մեղանից: Ա՞ի թէ  
 էն գատաւորն լաւ հաւան կըկենայ  
 մեզ երբոր նորանից թողանե՛ խընդ-  
 րելով կասենք՝ թէ մենք էս բահե-  
 րըս և բամբասանքներըս նրա հա-  
 մար արինք, որ չեինք իմանում, թէ  
 ինչ խօսենք և կամ ինչ բանով անց-  
 կացնենք մեր ժամանակըն:

(Առաջին) Ա՞յ որ մենք մեղաւոր  
 ենք նորանով որ շատ անգամ և  
 անդադար թողել ենք և կամ ուշա-  
 ցըլ ենք] մեր յատուկ հալւաւոր

գործքերը և կամ մեր սուբք հաւատ-  
 քի պարտաւորութիւնները, և պա-  
 րապվել ենք ուրիշ անպիտան բա-  
 ներով՝ կարծելով, թէ դեռ ժամա-  
 նակ շատ կայ. միթէ սովորե՞լ ենք  
 մենք խմառաւթեան էն գլխաւոր  
 և շատ հարկաւոր կանոնըն. թէ խ-  
 կի յետ միքցեր էն բանըն մինչեւ  
 էգուցվան օրն, որ կտրող ես անել  
 էսօր. և խոկի յետ միքցեր էն բանըն  
 մինչեւ նոր գալու սահտթն. որ կա-  
 րող ես անել էս հիմֆկվան սահա-  
 թումն. Զէ՞ որ շատ անգամ մեր  
 անմառութիւնըն հասկացել ենք՝ թո-  
 ղելով և կամ ուշացնելով մեր հար-  
 կաւոր գործըն, որ հենց իրան ժա-  
 մանակումն պէտք էր կատարել. Խ-  
 մաստուն Ապօմօնն ասումէ. թէ  
 ամէն բանի համար իրան ժամանակ  
 կայ և ամէն ստեղծվածի համար  
 ժամանակ՝ ելինքի տակն Ապօմօն  
 մարիտ է, որ ամէն խելացի մարդ  
 պէտք է գիտել և հետեւիը որ ամէն  
 բանըն իրան յատուկ ժամանակումն  
 գործէ և կատարէ. ինչու որ՝ շատ ան-

գամ մենք զդ ջանումենք, որ մեր պատ-  
շաճ ժամանակըն կոբցըինք։ Պատ-  
ճառն որ՝ հենց սրա համար շատ  
թշուառութիւն ենք քաշում և շատ  
անգամ պատահումի, որ մենք մեր  
բանըն իսկի չենք կարօղ կատարել  
որովհետեւ իսկի մին էլ պատշաճ ժա-  
մանակ չենք գտնում նորան կատա-  
րելոյ համար. էլ աւելի ժամանակ  
չըկայ։

Փէլիկս դատաւորն յետ քցեց էն  
խօսակց ալթիւնըն որ պօղոս Առա-  
քելոյ հետ ունէր Վրբիստոսին հա-  
ւատալոյ համար և արդարութեան  
համար և նոր գալու դատաստանին  
համար, մինչեւ որ պատշաճ ժամանակ  
գտնէ՝ բայց հաւատալի է թէ իսկի  
մին էլ չըկատաւ։ (Գործ Աստիւ-  
24. 25. ) Ապա Աստուծոյ բանն սո-  
վորցնումի մեղ, որ եթէ մենք չենք  
հետեւում մեր փրկութիւն ստանալոյ  
համար էս հիմիկվան ժամանակումն,  
որ ողորմութեան և շնորհաց ժա-  
մանակն է, հրեշտակն պատրաստ է  
աղաղակել թէ էլ առելէ ժամանակ

Հընայ : Յօհե որքան ժամանակ  
 է մնում մեզ համար որ մեր  
 փոկութեան համար գործածենք,  
 էն միայն լստուծոյն է յայտնի : Առեր  
 մնացած օրերն ուրբա կամքիցն են  
 կախված և նորանց թիւն ամէն ի-  
 րիկունն պակասվումէ : Արա համ ը  
 թող չը՛տաս ով մարդ, որ էգուց-  
 վան օրի առաւօտն քեզ մին էլ ծու-  
 լութեան մէջ գտնէ : Ատածիր հե-  
 միկ՝ թէ ինչպէս չարաչար ես անց-  
 կացրել քո առաջվան ժամանակըն,  
 սահաթներըն, ամիսներըն, և տա-  
 րիքըն, մեզքի և յիմարութեան  
 մէջ մանգալով և կամ ունայն և  
 փուչ պարապորդութեանց հետեւ-  
 լով :

Խս մտածմունքս որ է քո անցկա-  
 ցած կեանքի համար, թող քո սիր-  
 տըն լժնէ զշ ջութենով՝ էնպէս  
 որ սրանից ետեւ միշտ հետեւող լե-  
 նիս քո պարտաւորութիւններըն կա-  
 տարելոյ համար հենց էս ժամա-  
 նակումն որ ձեւքդ կայ : Եւ որով-  
 հետեւ էլ յետ ես ընկել քո Վրիտ-

տոնէութեան գործքերիցն անցկացած ժամանակումն, ապա հիմիկ հետեւիր որ շուտ շուտ առաջ գնաս. և բո հոգոյ ամեն զօրութենովն ջանք արա որ հասնես էն վարձքին և պսակին որ Աստուած իրան հաւատացեալերի առաջին է դրեւերկընքի արքայութենումն: Ասիր Աստուածոյ ձայնըն հորա սուրբ աւետարանի մէջն երկուպատիկ մըդառութենով, և ցանկացիր հորանով օդուտ ստանալ քո հոգոյ համար: Ազօթք արա դէպի երկայնամիտ և շատ համբերող Աստուածն պարզ մոքով և ջերմեւանդ սբուով: աշաղակիր դէպի հա և անդադար աղաչանք արա, մինչեւ որ քո մեղաւոր հոգիդ դարձած լինի զըդջութեան և ապաշխարութեան մէջ՝ հորոգված լինի սրբութեան հետեւը համար: մինչեւ որ հաստատնշանով իմանաս, թէ Աստուածոյ ձըշմարիտ սէրն և հորա որդի Յեսուսի Քրիստոսի կենդանի հաւատքըն քեղանում գործված հաստատ-

ված է: Եւ իսկի չըդադարես, մինչև  
որ շնորհքովն հաստատ յոյս ստա-  
նաս քո սրտումնի, թէ դու Աստու-  
ծոյն հաճոյ ես և թէ ուն է քո  
հաշտված հայրն որ երբ որ օրերն  
ամիսներն և տարիքն անց կըկենան,  
հաստատ մտնես արքայութեան մէջ  
որտեղ որ յաւիտենական լոյսըն և  
ողորմութիւնըն և խաղաղութիւնըն  
կըվայելես:

Ժամանակն կըվերջանայ:  
Փառք Աստուծոյ. որ նա դեռ չի  
վերջացրել Թողղ շնորհակալ լես-  
նինք նորա ողորմութենէցն, որ նա  
էս քան ժամանկս զգուշացնումէ մեզ  
և շատ կերպ պատահմունքներով  
զարթնացնումէ մեր հոգին, էն ժա-  
մանակի վերջըն յիշացնելոյ համար  
որ մօտենումէ: Ամէն հիւանդու-  
թիւնն մեր միտքս է բերում, թէ  
մեր կեանքն մօտենումէ իրան վեր-  
ջին: Աներ բարեկամների և ընկեր-  
ների մահն ամէն ժամանակ մեզ  
յայտնի և հաստատ յիշացնումէ, թէ

մեր մահն էլ հեռու չեւ շեհց էս  
կերպովս ամէն պըծված շաբաթն և  
նոր կիրակին էլ զգուշացնումէ մեղ  
նորա համար: Ամէն քարոզ որ ժա-  
մանակի կարծութեան և մեր կեան-  
քի անհաստատութեան համար խօ  
սումէ, և նոր դաս և յորդորմունք  
մեղ համար, թէ հրեշտակն շուտով  
կը յայտնէ մեր ժամանակի վՃի-  
ռըն:

Ապա որքան մեղաւոր կը լինէնք  
մենք, եթէ միտք չըդնենք էս ա-  
մէն ահաւոր յորդորմոնքներին: Ա՞ն-  
քանի երկար ժամանակ է, որ Յե-  
սուս Քրիստոս, և նորա ողորմու-  
թիւնն և աւետարանն կանչեց քեզ,  
մինչեւ որ կամաց կամաց սկսել ես  
քո հոգոյ փրկութեան համար միտք  
անել: Եւ հեմիկ էլ եթէ մեղքի  
քնիցն և թմրութենիցն զարթնացել  
ես. միտքդ բեր թէ ինչքան երկար  
ժամանակ Յիսուս համբերեց քեզ  
մինչեւ որ նորա լուսովն լուսաւորվե-  
ցար և քո կորուստըն ճանաչեցիր.  
և թէ նորանից ետեւ էլ ինչպէս ան-

դադար յորդորմունքով և զօրաւոր  
գործքերով, ողորմութենով և պա-  
տիժ տալով, քաղցը սիրով և սաստկ-  
ութենով, ուրախանալի խոստմուն-  
քով և ահ տալոյ խօսքով և մահա-  
ւանդ սուրբ հոգոյ հերսի ծածուկ  
հերգործութենովն և առաջնորդու-  
թենովն օրէցօր հոգս արաւ քեզ  
համար՝ որ քեզյետ դարձնէ Աստու-  
ծոյ մօտ և քո հոգին ապրեցնէ և ի-  
րան շնորհքովն բժշկէ։ Ապա հե-  
միկ որ էս ամէնըս իմացար՝ իրաւի՞ է  
որ Ճշմարտութենով ե՞ս քո մեշքե-  
րիցն շշ ջացել։ **Ճ**շմարտութենով  
ե՞ս ընդունելքեզ ընծայված գթու-  
թիւնըն և շնորհքըն։

**Յ**ահնձնե՞լ ես քեզ ամէն բահում  
քո տէրին և բոհե՞լ ես բոլոր սրտով  
նորա փրկութիւնըն Ահա հիմիկ է  
ընդունելի ժամանակն, հիմիկ է փըր-  
կութեան օրն Աս օր որ նորա  
ձայնըն լսէք չի պնտացնէք ձեր  
սրտերըն։ Խսկի մին տեղ չի ասված,  
թէ եգուց է փրկութեան օրն, կամ  
թէ եգուց է ընդունելի ժամա-

Նակնա բայց հիմիկվա՞ն սահաթե  
միայն տըլված է մեզ։ Ուրեմն ա-  
մէն հոր օր և ամէն սահաթ է ան-  
ասելի ողորմութիւն մեզ մեղաւոր  
մարդկանց համար։ Մեծ ողորմու-  
թիւն է ով մեղաւորք՝ որ հենց էս  
առաւօտս դեռ աշխարհքումն էք  
զարթացել և ոչ թէ դժոխքի մէ-  
ջըն։ որ հիմիկ խապառ դէն չենք  
քցված և դեռ հիմիկ ամէն յոյս և  
ամէն ողորմութիւն չէ կտրված։

Ճամանակն կը վերջանայ։  
Երանելի է նա որ էս վերջի  
բոպէին ուրախութենով մտիկ կը-  
տայ։ սղատձառն որ՝ պատրաստ է նո-  
րա համար։ Կա խկի պետք չէ որ  
վախենայ ոչ էս վճռիցն և ոչ հը-  
րեշտակի երդումիցն, երբ որ իրան  
ձեռըն դեպի երկինքն կը բարձրա-  
ցնէ և բարձր ձայնով կը կանչէ։ Աէ  
էլ աւելի ժամանակ չըկայ։

Երանելի են հորանք՝ որ էսպէս  
լաւ են գործածել իրանց կեան-  
քըն և ողորմութեան և շնորհաց օրըն։

Երանելի են. ինչու ոք՝ Աստուծոյ  
 սկառկերն մին էլ նոր փայլումէ  
 նորանց սրտի մէջն և իբր հաստատ  
 նշան հաւատացնումէ նորանց, թէ  
 Աստուծոյ առաջին ողորմութիւն և  
 չնորհք են ստացել Յիսուսի Քրիս-  
 տոսի ձեւովն: Կորանք յուսոց երկ-  
 րումն քննեցին և ամօթով իմացան  
 իրանց անցկացած անմտութիւնըն.  
 լաց էլան իրանց մեղքերին համար  
 և զղջացան նորանցից, դեռ քանի  
 որ զղջանալոյ ժամանակն չէր անց-  
 կացել. նորոգվեցան և նոր ստեղծ-  
 ված էլան սուրբ հոգովն, էնպէս  
 որ նորանց պաօշնելն և նորանց  
 կեանքն էլ յայտնումեն էս երանե-  
 լի և Աստուածային փափոխութիւ-  
 նըն որ նորանց մէջն է գործված.  
 Նորանք պատրաստվեցան մահի հա-  
 մար, գիտելով թէ կեանքն և ժա-  
 մանակն մէնակ նրա համար էր տըվ-  
 ված իրանց: Ճշմարիտ երանելի  
 են էս հոգիքն. պատճառն ոք՝ էդ-  
 պէս իմացան և պատուեցին ժամա-  
 նակի արժանաւորութիւնըն և գի-

նըն, որ ոչ թէ մէսակ չի կորցը-  
րին նորան անպիտան և փուշ բա-  
ներով, բայց նորանով էլ իրանց  
համար էնպէսի գանձ (քաղնաց) ձա-  
րեցին պատրաստեցին. որ էն ի-  
րանց անոյկացած ժամանակիցն շատ  
աւելի թանգ և փառաւոր է. ին-  
չու որ՝ Աստուածային ողորմու-  
թեան և շնորհաց գանձըն գտին  
և յաւիտենական փառաց յոյսըն ըս-  
տացան։ **Ճշմարիտ երանելի էն**  
**էն հոգիքն.** ինչու որ՝ նորանց  
բաղտուորութիւնն սկիզբըն կառ-  
նէ հենց էն ժամանակումն, որ  
նորանց մահկանացու կեանքն էս աշ-  
խարհըումն վերջանումէ. թռնդ ա-  
ւելի մանր մանոր քննեհիք և մը-  
տածենք նորանց էս երանութիւ-  
նըս։

Խաւարի և տարակուսանաց ժա-  
մանակն անցկացաւ. էլ դուք մո-  
լորութեան և անմտութեան մէջ  
չէք թաղվիլի։ Ամէն բան ձեր  
աչքին կերենի իրան Ճշմարիտ կեր-  
պովն Աստուածային լուսոյ առա-

ջին, և դէմ յանդիման կըտենէք  
ձեր առաջ իդ դրած մեր Աստու-  
ծոյ գեղեցկութիւնըն. և յափտե-  
նական ձշմարտութիւնըն Ալտես-  
նէք նորան հենց իրան փառաւոր  
էութենումն և իրան որդի Յե-  
սուս Քրիստոսումն, որ է Հօր լու-  
սափայլ պատկերն. կը Ճանաչէք նո-  
րան, ինչպէս որ նա էլ ձեզ ճանա-  
չումէ:

Փորձվելոյ և վախենալոյ ժա-  
մանակն անցկացաւ: Երբ որ մին  
անգամ էս աշխարհքիս սահմա-  
նիցն դուրս կը դնաք և ամէն մարմ-  
նական մոլորացնօղ բաներիցն կը-  
հեռանաք, ապա փրկութիւնն էլ իս-  
կի տարակուսելի չի լինիւ Եւ  
իսկի վտխ չի լինիլ, թէ Հօր  
սիրոյ և նորա սիրեցեալ Արդոյ  
շնորհաց մասնակից կը լինիք թէ  
չէ՝ բայց հաստատ կը լսյելէք Աս-  
տուծոյ ամէն փառքըն և սե-  
րըն:

Ապա մեղքն էլ ոչ ժամանակ և  
ոչ տեղ չի գտնիլ որ ձեր մէջն

բնակվելի։ Կորա իշխանութիւնն  
որ մեր մահկանացու մարմնոյ մէջն  
բնակվելի կը լեռջանայ, երբ որ հենց  
մարմինն ինքն փոշի կը դառնայ։  
Կպա սրանից ետե եւ դուք իսկի  
չեք զգաւ և խմանաւ նորա խիստ  
և պիղծ խու ովութիւններըն, ոչ  
ձեր սրտի և ոչ ձեր կեանքի  
մէջն։

Ձեր հոեոր թշնամի սատա-  
նային հետ կուիւ անեւլոյ ժամա-  
նակն անց կացաւ։ Եւ հակառա-  
կութիւն չըկայ մարմնու և հոգոյ  
մէջն։ Եւ կուիւ չըկայ աշխարհ-  
քի և սատանայի հետ, որ հողա-  
լաւոր կերպով հետեւումէր ձեզ  
խարեւ և յետ դարձնեւ ձեր երկ-  
նաւոր յուսիցն։ ձեր զինուորաւթեան  
զործն պլծվել է։ և ձեր յաղթու-  
թիւնն իսպաւ կատարվել է։

Ձեր կոստուածանից ջոկված և  
հեռացած լինելոյ ժամանակն անց  
կացաւ։ անհոգութեան, ծուլութեան  
և մին եւ մեղքի և կորուստի մէջ  
ընկնելոյ վախենալի ժամանակն անց

կացաւ։ Ապա սիւն կը լինիք Աստու-  
ծոյ տաճարումն և ել դուրս չէք  
գնալ նորանից։ Աս ինքն կըսիրէ  
ձեզ ինչպէս իրան անձըն, և ձեր  
սիրոյ բոցըն էնքան կըվառէ և կը-  
բարձրացնէ. մինչեւ որ հրեշտակների  
և կատարեալ սըրբերի սիրոյն նման  
լինի։

Ապա էն ժամանակն էլ չէք չար-  
չարիլիլ մեղաւորների ընկերութե-  
նովն։ Զեր հոգին էլ չի ծանրանալ  
և շփոթվիլ ամբարիշտների խօսակ-  
ցութենովն, և ձեր սուրբ և երկնա-  
ւոր պարապորդութիւններն էլ չեն  
կտրվիլ Աստուծոյ և նորա շնորհաց  
թշնամիքներովն։

Զեր ծանր աշխատանաց և նե-  
ղութեանց ժամանակն անց կացաւ։  
Արանելի են էն մեւելներն՝ որ  
Տէրումն ննջեցին (մեռան). ինչու  
որ՝ հոգին էս է ասում; որ իրանց  
աշխատանքներիցն հանգիստ առին։  
(Հայք. ԺԴ. 13.) Ոչ սուդ. և ոչ  
աղաղակ չի լինի. ինչու որ՝ տրտ-  
մութեան աղբիւրներն չորացան. յա-

ւիտեան. և ոչ էլ ցաւ չ' լինիլ  
ոչ մարմնոյ և ոչ հոգոյ. ինչու որ  
Աստուած ամէն արտասունքըն կը-  
սրբէ նորանց աչքերիցն և էլ  
մահ չ' լինիլ: (Յայտն. ժդ.  
21. 4:)

Ա. մէն բան կատարված է.  
ասաց մեր օրհնեալ Փրկիչն խաչի  
վերայ. ամէն բան կատարված է,  
կարօղ են նորա Ճշմարիտ աշակերտ-  
ներն էլ ասել մտհու սահաթումն և  
ժամանակի վերջումն. իմ մեղքերն,  
յիմարութիւններն, տրտմութիւննե-  
րըն և չարչարանքներն, ամէնն կա-  
տարված է յափառեան, և էն զօրա-  
ւոր հրեշտակն երդում կուտէ, թէ  
էս թշուառութեանց ժամանակն. վեր-  
ջացաւ և էլ չ' լինիլ նորանք անց  
կացան և իսկի մին ժամանակ յետ  
չեն դառնալ:

Ովերանելի հոգիք, որ էս երկ-  
րումն ձեր օրերի փոքր և անյայտնի  
թիւըն էդպէս իմաստութենով կար-  
գեցիք, որ շուտով ձեր անձներըն

պատրաստեցիք Երկինքն գնալոյ հա-  
 մար: Երանելի էք դուք սմէն բա-  
 նից և մտքից աւելի: (Օրերն, ա-  
 միսներն՝ տարիքն: և ժամանակի ա-  
 մէն կարճ փոփոխութիւններն, ինչ-  
 պէս փոքր կետ կը ծածկվին ձեր աչ-  
 քերիցն էն Երանելի և յաւիտենական  
 կեանքի ծոցումն: Ժամանակի գետն,  
 որ գնումէր էս մահկանացու կենաց  
 մէջ և տանումէր ձեզ շատ գայթակ-  
 ղութեան և փորձանաց, և տրտմու-  
 թեան քարերի միջով։ Կըքցէ ձեզ  
 անվերջ ուրախութեանց ծովին մէջ:  
 Երաւի էն Երանութիւններն պէտք  
 է որ յաւիտենական լինին. ինչու որ  
 էն տեղ ժամանակ չըկայ. բայց  
 փոխված թաղված է անմահ յաւի-  
 տենականութեան մէջն:

---

Ըուշի բերդումն աւետարանական  
ժողովքի տան մէջն էս հետեօղ  
գրեանքս էլ ծախվումեն:

- 
1. Այս էպահանքուն պարաւ 'է վընթափէ:
  2. Համաօպունկուն գերահանութեան:
  3. Համաօպ բարգիրտ. 'է գրաբառէ  
յաշնաբերհաբառ:
  4. Ունեցուած + 'է հին էպահանքէ:
  5. Հաւատուածն ասպաւածոցին վիզու-  
թեանց. Գրաբառ և աշնաբերհաբառ:
  6. Վագանութեան սաւրբ Գրոց Գրաբառ:
  7. Տեղան այբաւելնական:
  8. Առաջ էն էտեռն սաղմուի:
  9. Արեւ խօսուիցուն + մին ժահանաց մին  
աշնաբերհան Տարչոց հետեն. աշնաբ  
հաբառ:
  10. Աւետարանի զօրուն էամ մին արաբ  
ժամանակնեան: աշնաբերհաբառ:
  11. Համաօպ ժնուանեան ժրիստոնէական  
հաւատուց և Տահմատական էրօնի. աշ-  
նաբերհաբառ:
  12. Շատ հարիտուր հարցմանինք. աշ-  
նաբերհաբառ:













